



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԱՄԴԱՐՅԱՆ

Թաղմախչի Մանուկ Ալամդարյանի որդի Հարություն վարդապետը ծնվել էր Աթդեր-խանում 1796 թվին: Նա աշակերտել է քաղաքի հայոց նորաբաց Աղաբաբյան դպրոցի ղեկավար և ուսուցիչ պոլսեցի՝ ժամանակի հմուտ ուսուցչի հռչակ վայելող Սե-րովբե «վարժապետ» Պատկանյանին: Իր ուսման ընթացքը «վարժապետի» մոտ ու ձեռքի տակ ավարտելուց հետո նա զարգա-

կոպտսին և թե իրեն շրջապատողներին ընդհանրապես:

Ալամդարյանը վաղ է սկսել գրել իր սրտաբուլիս անուշ, պարզ, ամեն մի քրա-ծանոթ ընթերցողի համար հասկանալի գրաբար ոտանավորները, նա վաղ էլ ա-մուսնացել է—18 տարեկան հասակում, 1813 թվին: Նա ամուսնացել է Մարգարիտ անունով գեղեցիկ օրիորդի հետ, որին սի-



ցել ու կատարելագործվել է գիտություննե-րի մեջ հայ և ուրա գրքերի ընթերցանու-թյամբ և ինքնուսուլթյամբ:

Նա ի բնե օժտված է եղել նուրբ, մեղմ բանաստեղծական զգացմունքով ու հոգով և տոկուն, աշխուժ աշխատասիրու-թյամբ: Իր այդ բարեմասնություններով աչքի է ընկել թե իր վարժապետին, թե Ռուսաստանի առաջնորդ Նիկոն արքեպիս-

րահարված է եղել, և հետագայում երգել ու գովաբանել է նրա գեղեցկությունը իր «Նրկու ձեռին երկու մոմ» ոտանավորի մեջ: Նրա այդ բանաստեղծությունները հետագայում, 1884 թվին, հավաքել, հրա-տարակել է նրա թոռը, հայտնի հայ գիտ-նական և Պետերբուրգի Համալսարանի Ա-րևելյան լեզուների ֆակուլտետի հայոց

Համար

լեզվի դասախոս Քերովը Ատտկանյանը: Ալամդարյանի անունը և բարի համբավը լսած են եղել և լազարյանները և հրավիրել նրան Մոսկվա, ձեռնագրել տվել քահանա, անունը փոխելով. Հարություն ի հիշատակ երիտասարդ զինվորական Հարություն լազարյանի, որ սպանվել էր լայաքիզի կոպում և կարգել Հայոց լեզվի ուսուցիչ լազարյան ճեմարանում, միաժամանակ նշանակել իրենց անձնական քարտուղար:

Ալամդարյանը գոհ է եղել իր վիճակից և կացութունից: Նա ունեցել է սիրող րնտանիք, իրեն հաճելի և ապահով պաշտոններ և հարմարություն ուսանելու և ուսուցանելու և ավելի ևս զարգանալու և կատարելագործվելու գիտությունների մեջ: Նա կարգացել է, թարգմանություններ է արել և շրջահայաց դիտել, ծանոթացել բարեկարգ լազարյան ճեմարանի կարգ ու կանոններին և ուսման ու մանկավարժական մեթոդներին, մի բան, որ հետո շուտով շատ պետք է եկել նրան Ներսիսյան դպրոցի ղեկավարման գործում:

Բայց նրա բախտավորությունը երկար չի տևում: 1821 թվին վախճանվում է նրա կինը և նա 26 տարեկան հասակում մնում է վշտահար այրի երեք որդի աղջիկ զավակներով, մի հանգամանք, որ այնուհետև երբեք չի մոռացվել նրա վշտից այրված սրտում:

Ներսես Աշտարակեցին, այդ ժամանակներն արդեն ձեռնարկել էր Թիֆլիսում Ներսիսյան դպրոցի շենքի կառուցման գործին (1822 փետրվ. 7-ին): Դեռ չավարտած կառուցման աշխատանքները պատվիրել էր Պողոս վարդապետին փոխադրվել իր աշակերտներով վանքի եկեղեցու բակի նոր շինությունը և այդտեղ շարունակել պարապմունքները: Նա անհամբերությամբ հարց ու փորձ էր անում հարմարավոր տեսչացու որոնելու բացվելիք դպրոցի համար: Նրա որոնումները լավ հետևանք են ունենում: Եհեսի պաշտոնի համար նա կանգ է առնում Ալամդարյանի վրա, որի բարեմասնությունների համբավը հասել էր և նրան: Ալամդարյանը հրավիրվում է դպրոցի տեսուչ:

Ալամդարյանը ժամանում է Թիֆլիս 1824 թվի աշնանը և իրեն հատուկ ջանասիրությամբ կաշում դպրոցի կազմակերպման գործին, որը մոտ էր նրա նրտին ու

տրամադրությանը: Դպրոցը պաշտոնապես բացվում է 1824 թվի դեկտեմբերի 1-ին: Ալամդարյանի գործունեությունը դպրոցում տևում է ընդամենը վեց տարի: Այդ կարճ ժամանակամիջոցում այնքան արդյունավոր է եղել նրա գործունեությունը, որ դպրոցի պատմության մեջ այդ շրջանը կոչվել է «Ալամդարյանի դար»:

1825 թվին Ներսիսյան դպրոցն ունեցել է 208 աշակերտ և կազմակերպվել է երեք դասարան, որոնցից երրորդ բարձրագույն դասարանը կազմել են Պողոս վարդապետի աշակերտները, որոնց մեջ եղել է և Խաչատուր Աբովյանն իր ընկերներով— Ստ. Նազարյանը, Առաքել Արարատյանը, Գալուստ Երմազանյանը, Պետրոս Մաղաթյանը (Սեյադ), Հովնան Հովնանյանը (Հովնանյան դպրոցի հիմնադիրը) և ուրիշները: Առաջին ուսուցչական խումբը բաղկացած է եղել հինգ հոգուց (որոնք և Աբովյանի ուսուցիչներն են եղել)՝ Ալամդարյանը, որ դասավանդել է կրոն, ռուսերեն և վայելչագրություն, Պողոս վարդապետը հավանորեն ճարտասանություն և տրամաբանություն, Ա. Զեյնսկին— ռուսերեն և թվաբանություն, պարսկաստանցի Բեթղեհմը— պարսկերեն, և լազարյան ճեմարանի շրջանավարտ՝ Ալամդարյանի նախկին աշակերտներից մեկը— հայերեն, ռուսերեն և վայելչագրություն:

Առաջին շրջանավարտները եղել են 1826-ին երրորդ ավագ դասարանից 18 հոգի, որոնցից 11 հոգի ստացել է ավարտական վկայական. դրանց մեջ եղել է և Աբովյանը, որը գնում է Հաղբատի Ս. Նշանի վանքը Եփրեմ կաթողիկոսի մոտ, որպեսզի վերջինիս համաձայնությամբ վենետիկ գնա ուսումը շարունակելու նպատակով: Ինչպես հայտնի է, Աբովյանին չի հաջողվում իր նպատակին հասնելու պարսկական պատերազմի պատճառով:

Ալամդարյանի դպրոցին մատուցած ծառայությունն ավելի մեծ ու շոշափելի կլիներ, եթե նրա առաջ կանգնած շիկներ երկու ձախորդ հանգամանք՝ Շահան Զրպետի Ներսիսյան դպրոց հրավիրվելը և քաղաքական այն վտանգավոր իրադարձությունները, որոնք տեղի ունեցան նրա օրով ցարական սատրապ Երևանի կոմս Ֆելդմարշալ Իվան Ֆեոդորովիչ Պասկևիչի ձեռքով:

Շահան Զրպետյանին Փարիզից հրավի-

րել էր Ներսեսը, խաբւած լինելով այն սուտ գիտնականութեան համբաւից, որ տարածւած է եղել Զրպետյանի մասին: Հետագայում պարզվել է, որ նա, ընդհակառակը, ոչ մի լավ համբաւի արժանաւորութիւն չի ունեցել, այն ինչ նրա դպրը և երկու տարի երեք ամիս ծառայելը միայն դպրոցի վրա նստել է, 4,486 ուրլի, այն ժամանակվա համար մի խոշոր գումար: Նա կատարյալ շարիք է եղել դպրոցի և Ալամդարյանի համար: Նա պարծեցել է, թէ Փարիզի «Արեւելյան կենդանի լեզուների դպրոցի» վարչութիւնը չի ուզեցել թողնել իրեն և միայն երեք տարով արձակուրդ է տվել, բայց հետո պարզվել է, որ նա արձակվել է դպրոցից իր անպիտքութեան պատճառով: Երբ նա ոտք է դնում Ներսիսյան դպրոց, արդեն 60 տարեկան ծերացած մարդ էր, տգիտ, վերին աստիճանի ծուլ, ֆրանսերեն լեզվի դասերին օրերով չէր հաճախում, չէր սիրում իր գործը, քսու էր և բանասիրու, արծաթասեր: Նրա ուշք ու միտքը եղել է միայն այն, որ զանազան կեղծ ու պատիւ միջոցներով կարողանա դրամ շորթել դպրոցից: Այդ ժամանակ դպրոցը կառավարել են պառջնորդ Սիմեոն եպիսկոպոս Բզնունին, Ալամդարյանը, Գալուստ Շիրմազանյանը և Գևորգ աղա Արծրունին, որոնց խնամքին է հանձնած եղել Ներսիսը: Դրանք բոլորում են Ներսեսին Զրպետի դեմ, բայց վեջինս չէր հավատում և մինչև իսկ հանդիմանում է Ալամդարյանին, պատմիւրելով նրան կատարել Զրպետի բոլոր պահանջները: Ներսեսը բավական չհամարելով այդ, շուտով դպրոցի տեսչութեան պաշտոնն առնում է Ալամդարյանի ձեռքից և հանձնում Զրպետին: Այս կարգադրութեան հետեանքը լինում է այն, որ 9 ամիս անցնելուց հետո այդ անխիղճ փարիզեցին ընդունելով դպրոցը 400 աշակերտ և վեց դասարանով հռաւալու ժամանակ հանձնում է երեք դասարանով և 150 աշակերտով: Ներսեսը ճամաշում է այդ սրիկային միայն այն ժամանակ, երբ Զրպետն արդեն աքսորվել էր Քիշինև և երբ նա արդեն ամբողջովին պարզել է իր ներքին խնկելութիւնը: Անցած լինելով Ներսեսի հակառակորդների կողմը նա, մինչև իսկ չի քաշվել և մատնիչի դէմ խաղալ:

Ավելի վտանգավոր է եղել երկրորդ


հանգամանքը: Պատկերիչ պատերազմի ընթացքում և հետո ընդհարվելով Ներսեսի հետ և նրա գործողութիւններին քաղաքական բնույթ տալով և հաղորդելով նախարարութեան ու կայսեր՝ կարողանում է Ներսեսին հռացնել տալ Կովկասից և դրանով էլ շատանալով, սկսում է հալածանքի ենթարկել այն բոլորին, որոնց հետ կապւած է աքսորյալի անունը և առաջին հերթին հենց Ներսիսյան դպրոցը ու նրա պաշտպան և կողմնակից անձերին: Պատկերիչ կամենալով փակել Ներսեսի առաջ նփրեմից հետո կաթողիկոս ընտրվելու ճանապարհը Բեհրուզովի միջոցով ճնշում է դսրծ դնում թույլ նփրեմ կաթողիկոսի և վանքի ազդեցիկ միաբանութեան վրա, վանքի ավագ լուսարար ու Ներսեսի կատարի հակառակորդ արքեպիսկոպոս Հովհաննես Կարբեցուն առաջնորդի պաշտոնով Թիֆլիս է բերել տալիս 1831 թ., իսկ հետո գահից հրաժարված նփրեմի տեղումն Կարբեցուն կաթողիկոս է ընտրել տալիս 1832 թ. և դրա միջոցով դպրոցի ղեկավարներից պահանջում Ներսիսյան դպրոցի վրա ծախսած փողերի հաշիվը: Դպրոցի ղեկավարները հրաժարվում են ներկայացնել փաստաթղթերը պատճառաբանելով, թէ հաշիվթղթերը Ներսեսի մոտ են, որի հետեանքով և նախկին առաջնորդ Բզնունին աքսորվում է: Սարսափ պատում է ամենքին, բոլորը մտնում են ծակուծուկ: Մնում է միայն Ալամդարյանը, որ մեն մենակ և խիզախութեամբ պաշտպանում է դպրոցը և հավատարիմ մնում Ներսեսի հանձնարարութեան: Պատկերիչ նրան հռացնել է տալիս դպրոցից: Ալամդարյանը դպրոցն անտերնշութեան շմատնելու նպատակով փակում է այն և բանալիները հանձնում Գալուստ Շիրմազանյանին, ինքը դնում էջմիածին, որովհետև ժողովրդի խնդիրքով նփրեմ կաթողիկոսը նրան հրավիրում է էջմիածին եպիսկոպոս ձեռնադրելու: Այդ ժամանակ հենց ընդունվել էր նփրեմի հրաժարականը և վանքում զբաղված էին Կարբեցու ընտրութեամբ: Վանքում Ալամդարյանը հիվանդանում է խոլերայով, իսկ երբ երկար տառապելուց հետո առողջանում է և վերադառնում Թիֆլիս, Պատկերիչ պահանջով աքսորվում է Հաղբատ, Ս. Նշանի վանքը: Դրանով իհարկե խափանվում է և Ալամդարյանի

եպիսկոպոսական ձեռնադրության գործը: Այստեղ, Հաղբատի Ս. Նշան վանքում կրկնվում է Ալամդարյանի հիվանդությունը ավելի ուժեղ կերպով և մահվան դուռը հասցնում նրան, բայց նրա ամուր, ջղուտ կազմվածքը դիմանում է և այդ պատահարին և առողջանում: Ահա այդտեղ է նա գրում իր «Յամսավերջն ասորիլի զպատուհանս բացի» ոտանավորը:

Ներսես Աշտարակեցին, որ Քիշնե նստած այդ բոլոր իրադարձություններին մանրամասն իրազեկ էր և տեղեկություն էր ստանում իր մարդկանցից, միջնորդություն է հարուցում և ազատում Ալամդարյանին ու նրան հրավիրում իր մոտ, Քիշնե 1831 թ. հունիսին: Բայց այդտեղ էլ Ալամդարյանը հանգստություն չի գտնում: Ներսեսը մանրակրկիտ հաշիվ է պահանջում նրանից դպրոցի դրամական գործերի մասին, բայց Ալամդարյանը չի կարողանում գոհացնել նրան, որովհետև նրա ձեռքին գտնվում էր հաշվեթղթերի միայն մի մասը: Վերջապես, Ներսեսը նեղանալով Ալամդարյանի վրա նրա մի անաչառ գրությունից (որի մեջ թվում է իր մատուցած ծառայությունները և յանիրավի կրած զրկանքները) հեռացնում է նրան Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքը վանահոր պաշտոնով: Այստեղ, հենց նույն տարում, Ալամդարյանը դեռ չբոլորած պաշտոնավարության 9 ամիսը, 1834 թվի մայիսի 3-ի թե 7-ի գիշերը, մահամերձ վիրավորվում է ավազակներից և բռնական օգնության ուշ հասնելու հետևանքով արյունաքամ է լինում և վախճանվում 38 տարեկան հասակում: Նա թաղվում է վանքում:

Ականատեսներից մեկը հետևյալ կերպով է պատմում մեզ Ալամդարյանի օպանությունը դեպքը. «Ես 14—15 տարեկան տղա էի և ապրում էի վանքում: Ես Մկրտիչ վարդապետի փոքրավորն էի: Սպանությունը պատահեց մայիսին, չգիտեմ որ թվի, օրը շաբաթ էր: Ալամդարյանից առաջ վանահայրության պաշտոնը կատարում էր Մկրտիչ Հովակիմյան վարդապետը, որը բարի ու հեզ մարդ էր, նա շատ սիրով էր Մկրտիչ վարդապետի հետ, թեև այս վերջինը խոտվարար և անհանգիստ բնավորություն ուներ: Ալամդարյանի դպրոց հետո վանքում շատ փոփոխություններ չեղավ: Նա միայն վանական կառավարություն պաշտոնական մասը առավ յուր

ձեռքը, իսկ մյուս մասերը մնացին դարձյալ Մկրտիչ վարդապետի ձեռքին, որովհետև վերջինս երկար ժամանակ ապրած լինելով վանքում ամեն բան լավ գիտեր: Վանական կյանքի բոլոր պայմաններին ծանոթ էր: Մկրտիչ վարդապետն ուսյալ մարդ չէր. նրանից շատ բան չէր կարելի սովորել, իսկ ընդհակառակը Ալամդարյանը մեծ ուսում ուներ և լավ վարժապետ էր: Ես առանձին ուսում չեմ ստացել, դպրոց, ուսումնարան չեմ գնացել, բայց իմ այժմյա ունեցած քահանայական պիտությունս նրանից եմ ձեռք բերել: Նա բացի հայոց լեզվից, լավ գիտեր և ուսաց լեզուն, քաղաքից աշակերտներ էին գալիս նրանից քերականություն սովորելու. շատ անգամ էլ նա ուղղում էր Մկրտիչ վարդապետի ուսերեն գրությունները: 1834 թվականը մի շատ անհանգիստ տարի էր նախիջևանցոց համար: Օր չէր անցնում, որ մի անբախտություն չպատահեր: Մեկ օր լսում էինք, թե այս ինչ մարդու տունն են մտել, մյուս օրը,— թե այս ինչ ազալի թանկագին ձիերն են տարել, կամ խանութն են կտրել, կամ մարդ են սպանել, և այլն և այլն: Ծատ անգամ մեր մեջ խոսակցություն էր լինում այդ գողությունների ու ավազակությունների մասին, և Մկրտիչ վարդապետը հպարտությամբ ցույց էր տալիս պատից կախած իր զենքերը և սպառնում էր, որ եթե մեկը համարձակի վանք գալ, կփորձե այդ զենքերի զորությունը: Ալամդարյան վարդապետն էլ մի ուժով տղամարդ էր. նա սիրում էր կատակներ անել և շատ զվարճանում էր, երբ լսում էր այդ ժամանակ վանքում բանող առադադործ Ավետիքի սրաքանությունները. Ավետիքը քաղաքում հայտնի էր «ստալյար» Ավետիք անունով: Մենք ապրում էինք ուրախ և անհոգ, թեև ես լսելով քաղաքում պատահածները, կարծես թե, սպասում էի, որ վանքում ևս կարող է մի այդպիսի բան պատահել: Մեր դռները շատ ամուր չէին. նրանք փակվում էին ներսից հասարակ սողնակներով, որ անցրած էին երկաթյա թույլ օղակների մեջ: Ես քնում էի Մկրտիչ վարդապետի սենյակում, որ դահլիճով բաժանված էր Ալամդարյանի ննջարանից և ընդունարանից, իսկ դրացի սենյակում ժամանակավորապես պառկում էր «ստալյար» Ավետիքը: Սպանության օրը վարդապետ-



Ս. Խ ա չ Վ ա ն ք
(Բակուժ տյն տունը, որտեղ կատարվել է սպանությունը)

ները թաղման հրավիրված լինելով գնացել էին քաղաք, և միայն երեկոյան դեմ վերադարձան վանք, որովհետև Հարություն վարդապետի աշակերտներին մեկի ծնողները չէին ուզեցել թողնել նրանց ասելով, թե նրանք մյուս օրը դարձյալ պետք է գան քաղաք հանգուցյալի այգը կատարելու համար, բայց վարդապետները չէին մնացել, առարկելով, թե երեկոյան ժամերգության ունեն: Սպանության գիշերը վանքում կային վարդապետները, Հարություն վարդապետի Բաբուշ Բաղասար աշակերտը, «ստալյար» Ավետիքը, Հարությունը, որ Ալամդարյանի փոքրավորն էր և պառկում էր նրա սենյակում, խոհարար կինը և նրա մարդը, որ գիշերն գիշեր գալիս էր վանք քնելու: Կային և ոռա մշակներ, որոնք հնձում էին պարտեզի խոտը և այնտեղ էլ հենց քնում էին: Մենք ամեն երեկո սովորություն ունեինք ընթրիք անելու: Մի օր ընթրիքի սեղանը մեր սենյակում էր պատրաստվում, մյուս օրը՝ Ալամդարյանի սենյակում: Այդ երեկո մեր սենյակում էր պատրաստված: Հարություն վարդապետը շատ ուրախ տրամադրության մեջ էր. նա խոսում, ծիծաղում և կատակներ էր անում. նամանավանդ նրան զվարճացնում էր «ստալյար» Ավետիքի խոսակցության ձևը և նրա ոճը, որ նա անդադար խնդրում էր կրկնել: Այդպես ուրախ և զվարճ ընթրիք անելուց հետո ամենքը վաղ ցրվեցին իրենց սենյակները քնելու: Ավագակները առաջ մեր սենյակը մտան. նրանք յոթը հոգի էին: Զգիտեմ, թե նրանք ինչպես էին մտել կորդորը, որ գտնվում էր մեր սենյակի առաջ: Ես հիշում եմ միայն այն, որ առաջ ոտնաձայն լսվեց, հետո ուժգին զարկից բացվեց մեր դուռը և ատրճանակի ձայնը մեզ խլացրեց ու ծխով լցրեց մեր սենյակը: Նրանք առաջ վազեցին Մկրտիչ վարդապետի վրա, երկու տղից մի րավորեցին նրան և կապեցին նրա ձեռքերը. կապեցին և իմ ձեռքերը և ճրագ վառելով կոտրեցին վարդապետի փողի արկղը, քրքրեցին գրքերը և մյուս իրեղենները: Ավագակներից մեկն այդ ժամանակ մոտեցավ ինձ և ցույց տալով վարդապետի վեղարը հարցրեց ուտե՞րեն. «Այդ ինչ բան է», ես պատասխանեցի թե վարդապետի վեղարն է: Ես նկատեցի, որ նրանք չճանաչվելու համար, սեպրել էին իրենց երեսր: Մեր սենյակում ամեն բան վերջանալուց

հետո, նրանք դիմեցին դեպի Ալամդարյանի սենյակը և մենք աղաղակի ու լացի. ձայն լսեցինք: Հետո մենք Հարությունից իմացանք, որ ավագակները մտնելով վարդապետի սենյակը նախ կապում են նրա՝ Հարությունի ձեռքերը և սաստում են, որ աղաղակ չբարձրացնի: Այդ ձայներից դարձնում է Ալամդարյանը և հարցնում. «Ո՞րք են և ի՞նչ են ուզում»: Ավագակներից երեք հոգի հարձակվում են նրա վրա, բայց նա այնպես ուժգին զարկում է նրանց կրծքին, որ նրանք հետ հետ գնալով, վայր են ընկնում և մեկի ուշքը գնում է, նրանք թողնելով վարդապետին, սկսում են ուշքի բերել իրենց ընկերոջը և վազում են ջրի: Այդ ժամանակ վարդապետը մոտենում է, որ փակի դուռը և շփոթին նրանց նորից սենյակ մտնելու, բայց ավագակները հենց այդ ժամանակ զարկում են նրա ձեռքին ու գլխին և մահամերձ մի րավորելով, մեջքի վրա վայր են ձգում դռան առաջ: Այնուհետև նրանք կոտրում են նրա արկղները, քրքրում են բոլոր սենյակը, բայց փող չգտնելով, առնում են նրա մուշտակները, մետաքսե շորերը և Մկրտիչ վարդապետի իրեղենների հետ երեք կապոց են անում, որ տանեն, բայց հանկարծ թողնում փախչում են: Ավագակների հանկարծակի փախչելու պատճառը եղավ «ստալյար» Ավետիքը, որ լսելով ատրճանակի ձայնը և ավագակների տուն մտնելը, սաստիկ վախենում ու պահվում է վառարանի հետևի խորշում: Երբ որ ավագակները վարդապետի սենյակում ամեն բան վերջացնում են, նրանք մտնում են և Ավետիքի սենյակը և մարդու կոշիկներ ու շորեր տեսնելով, բայց իրեն մարդուն չնկատելով, կարծում են, թե այդ տղից մարդ է գնացել ագարակ օգնություն կանչելու: Ալամդարյանը տեսնելով, որ ավագակները փախչում են, նրանց հետևից կանչում է. «Ո՞ր եք դնում, բարձրացրեք ինձ և տարեք մահճիս վրա»: Երբ որ նրանք կատարում են նրա հրամանը, նա երեսարբիչ է պահանջում, կապում է իր ձեռքը և սկսում է սպառնալ, թե «նրանք իդուր են ուզում այդպես հապճեպ փախչել, միևնույն է, որտեղ որ լինեն նրանք, կգտնեն նրանց և իշխանության ձեռքը կհանձնեն...»: Վերջապես, սենյակներում աղմուկն ու ոտնաձայնները դադարեցին. մենք հասկացանք, որ ավագակները փախան: Մի փոքր հետո եկավ մեր սենյակը

Հարուստներ և տեսնելով մեր դրությունը, սկսեց արտասվել, նրա ձեռքերը ամուր չէին կապել, այնպես որ նա կարողացել էր կամաց-կամաց թուլացնել և արձակել կապերը: Նա մեր ձեռքերն ևս արձակեց, և մենք դուրս եկանք բակը և տեսանք, որ աղախնի մարդու ձեռքերն էլ կապած են: Նրա ձեռքերն արձակելով, ուղարկեցինք ագարակ օգնություն կանչելու, իսկ մենք գնացինք Ալամդարյանի սենյակը: Մինչ այժմ ես շատ լավ հիշում եմ նրա սենյակի դրությունը—կոտրած արկղները, քրքրած գրքերը, շորերը և արյան մեծ լճակը, որ լերդացել էր, մակարդվել և սոռացել ճիշտ այն ձևը, որ ունենում է մեջքի վրա պառկած մարդը: Ալամդարյանը լուռ, անխոս պառկած էր անկողնում. նա գլուխը դրել էր վիրավորված ձեռքի վրա և, կարծես, նիրհում էր: Ագարակցիներից առաջինն եկավ Արծաթպանյան Կարապետը, որ մի քաջ և համարձակ տղամարդ էր. նրանից հետո եկան ագարակցիներից շատերը և պատմեցին մեզ, թե իրենք տեսել են ավազակներին երեք կառքով սրբնթաց ագարակի միջով փախչելիս: Իսկույն իմաց տվինք քաղաքագլխին և Ալամդարյանի աղջկանը: Քաղաք գնացողն եղավ նույն Կարապետը, որովհետև ուրիշները չէին համաձայնում գնալ, ասելով, թե ավազակները նոր միայն կառքերով դուրս գնացին ագարակից և դեռ ճանապարհին կլինեն: Առավոտյան դեմ անհամար մարդ եկավ քաղաքից, եկավ և քաղաքագլուխը բժշկի հետ և հանգուցյալի Աննա Աղջիկը, որ Սերովբե Պատկանյանի հարսն էր և ապրում էր Նախիջևանում: Վարդապետին տարան քաղաք և տեղավորեցին բժշկի մոտ, բայց ոչինչ չօգնեց, նա միայն 15 օր ապրեց և մեռավ իրեն շրջապատողներին սեր և խաղաղություն քարոզելով: Ավազակներից մի քանիսին բռնեցին, Մկրտիչ վարդապետի փողի մի մասն էլ գտնվեցավ:

Այս բոլորը մեզ պատմել է նոր-Նախիջևանի Ս. Գևորգ եկեղեցու ծերունի քահանա Տեր-Հակոբ Շատվորյանը, որ Ալամդարյանի սպանության դեպքի ականատեսներից միակն է, որ մեզ պատմելու ժամանակ դեռ կենդանի էր: Մեր ձեռքին գտնվում է հայտնի Մսեր Զմյուռնացու մի նամակը, որից երևում է, որ Մսերն ինքն էլ այդ ժամանակ գտնվել է Ս. Խաչ վանքում և ականատես է եղել սպանության արհամար-

քին և մինչև իսկ ինքն էլ ենթարկված է եղել «գուլթազրկման» մի հանգամանք, որ չի հիշել Շատվորյանը:

Կա և մի վավերական, որ մենք, ցնծայել ենք Գրական թանգարանին: Դա մի քնդարձակ նամակ է, որի մեջ նկարագրված է Ալամդարյանի այն 15 օրվա կյանքը, որ ապրել է մահամեծ վիրավորվելուց հետո, և նրա մահն ու թաղումը: Նամակի հեղինակը եղել է նոր-Նախիջևանցի կաղարյան ճեմարանի շրջանավարտ Աստվածատուր Խաղամյանը, որ գրել է Ա. Պ. Յ. իր մի մտերիմ բարեկամ մեզ անհայտ Դ. Ե-ին:

Ավելորդ չենք համարում դրանից մի քանի հետաքրքրական հատվածներ մեջ բերել Ալամդարյանի կենսագրության լրության համար: «3—7 մայիսի երկուտասներորդ ժամու գիշերոյ, մինչդեռ մարդիկ ամենայն հանգչին ի քուն քաղցրութեան առ ի կազդուրել զթուլացեալ զօրութիւնս անձանց յաշխատանց տունջեան, ավազակք հինգետասան յեղակարծում պահու եկեալ սուսերով եւ բրօք եւ բեկեալ խորտակեալ զդրունս խցից վարդապետաց, մտանն, նախ ի խուց Մկրտիչ վարդապետի Հովակիմեան, ուր յետ բազումս դառնելոյ եւ շարշարելոյ զողորմելին, կողոսրտեալ զամենայն ինչս եւ կապեալ զոտս եւ զձեռս նորին, մտանն ի խուց հօր Հարութիւն վարդապետի... Նա տեսեալ առաջի իւր զանձինս միայն երիս, ամօթ համարեցաւ արիական առոյգ երիտասարդութեան իւրում առանց իրիք ընդդիմութեան անձնատուր լինել ի ձեռս աւազականց... Յարձակեցաւ ի վերայ նոցա եւ միակ հարուածով գերեւին աւազակսն եւ անդին յերկիր կործանեաց, եւ այն ինչ կամէր կապել զոտս եւ զձեռս նոցին, անդեն ընդ աղաղակելոյ յաղթելոնց առ արտաքինսն «ребята, давайте мне трою» իսկոյն իբրեւ զկայծակուն հրոյ թօթափեցան ի ներքս... հարին նախ զգլուխն եւ ճեղքեցին մինչեւ ցուղեղն եւ հարին ապա զձեռն եւ կտրեցին զկէս ոսկեր աջոյ դաստակին եւ այնպէս արկին յերկիր արիւնաթաթաւ ուղաթափ եւ շնչասպառ և ապա, կստորեալ զարկեղս եւ զամենայն ինչ ի խցին անդ ըստ հաճոյից իւրեանց յափշտակեալ, կողոսրտեալ, դիմին աստուածուրաց մարդասպանքն ի տեղիս իւրեանց:

Յերկրորդում պահու գիշերոյ կիւրակի աւուր ընդ արշալոյսն, որ երկուշաբթի լու-

սանայր օր, գուժկան հասանէր ի քաղաքն առ քաղաքական գլուխն, բերելով լուր շարալուր, կսկծեցուցիչ սրտից եւ ընդ լուրս բօթաբեր եւ զամենայն փողոցս մատնէր յամբոխ շփոթի եւ տարակուսանաց: Նոյն ժամայնս առեալ քաղաքապետին ընդ իւր զբժիշկն քաղաքական եւ զմի ի հոգաբարձուաց քաղաքիս, դիմի շտապաւ ի ս. Խաչ վանս ի տես եւ ի նպաստ տարաբախտից: Մտանեն, նախ առաջին, ի խուց հայր Հարութիւն վարդապետու Ո՛ր սարսափելի եւ աղէտալի տեսարան. տունն լի արեամբ, տանուտէրն արեամբ թաթաւեալ, դեղնեալ դիմօք, անզօր եւ ապիկար նստեալ ի վերայ աթոռոյ, որ եւ ի տեսանելն իւր զանգուզական բարեկամն իւր զանուանակից քաղաքական գլուխ Աղա Հարութիւն Խաչիբեանն իջուցանէ յաշաց ակամայ զաղբիւրս արտասուաց... Այլ ընդ իւրում բնական ուրախ եւ զուարթ բնութեան, մոռացեալ անդէն զվիշտ իւր եւ զցաւ, սկսանէ զսովորական իւր առնուլ զուարճախօսութիւն ընդ բարեկամաց իւրոց ուրանօր եւ բժիշկն եղեալ զկարեւորն սպելոյնի ի վերայ վիրաց, դառնայ վերստին ի քաղաք ընդ քաղաքապետին: Բայց վիրավորն ի շերմութենէ վիրաց չիմանալով նոյնժամայն զցաւն անտանելին, տակաւին կայր անդորր եւ որք շուրջն կային զնովաւ սիրելիք եւ բարեկամք, սպասէին ակնարկութեան առ ի սպասաւորել նմա, այլ ի խօսելն իւր ընդ նոսա, յանկարծ հասաւ գոյն երեսաց, թուլացաւ եւ անկաւ ուշաթափ, եւ յետ բազում անգամ սրկելոյ ի նա սառն ջրոյ, բացաւ զաշս իւր, ասելով. «Ափսոս քեզ, Հարութիւն վարդապետ, որ վաղ թառամելոց ես, կեանքդ քո եւ ծառայութիւն դեռ պէտք էին եկեղեցւոյն Հայաստանի»: Եւ ըստ առաջարկելոյ միում ի քահանայից, որ անդն կայր յայն ժամ, հաղորդեցաւ տարաբաղդ վիրաւորն կենարար մարմնոյ եւ արեան Տեառն:

Իմացեալ քաղաքապետին զփոփոխութենէ վիճակի վիրաւորին, կրկին անգամ առանց յամեցման ի Ս. Խաչ հանդերձ բժշկաւ, տանելով ընդ իւր եւ զառանձին զուգածի կառս առ ի ածել զվիրաւորեալն ի քաղաք, եթէ հարկն պահանջիցէ, ուրանօր մատուցեալ վիրաւորին եւ զայլ կազդուրիչ սպելոյնիս, եղեալ զնա ի կառս, ածեն ի քաղաք... Եւ այսպէս տարեալ հանգուցին զվիրաւորն յօթեան բժշկին եւ

յանձնեցին զնա նորին հոգատարութեան եւ կառավարութեան...

Յառաջին, երկրորդում եւ երրորդում աւուր ոչ կարացի երթալ առ նա, վասն զի բժիշկն ոչ զոք թողույր առ նա: Ի չորրորդում աւուր ըստ առաջարկելոյ նորին իսկ բժշկին, մտի առ նա եւ երկրպագի: Ամենայն ինչ փոփոխեալ ի նմա: Յորժամ հարցի զնա, թե, հայր սուրբ, ո՛ր իցէ, կամ յորո՞ւմ տեղուջ աւելի ցաւն կամ անհանգստութիւն անձիդ— պատասխանեաց— թեպէտ վէրք գլխոյս եւ աւելի են, եւ սաստիկ, սակայն վէրք ձեռացս այնպիսի իմն անտանելի եւ անմոռանալի ցաւ են, որք մոռանալ տան ինձ զգլխոյ վէրս, որովհետեւ բոլոր կեանք, բոլոր պարծանք, բոլոր ապրուստ վարդապետի նոյնպէս եւ ամենայն մարդկան ձեռք են, իսկ առանց ձեռաց զի՛նչ իցէ կեանք մարդոյ...

Ի 10 ամաց հասակէ, կարծեմ, աշակերտեալ աստուածային գրոց եւ դպրութեանց, ի 19 ամաց հասակէ մինչեւ ց34 զբահանայութեան վարեալ զպաշտօնս, յ34 է մինչ ի 39 վարդապետեալ: Ահաւասիկ մեզ բոլոր անցք եւ պատկեր կենաց նորին...

Ախտակիրն զրկեալ, հասեալ վերջին ժամ փոխման իւրոյ յաստիացս, արիացեալ, ելեալ նստի ի վերայ աթոռոյ ի կատարեալ բանականութեան իւրում, յայտնի է ի ձեռն անվանակցին Ա. Պ. Խ. բոլոր հասարակութեան նախիջեաւայ զիւրն շնորհակալութիւն: Շնորհակալ եմ, ասէր, ի Զէնք, ո հարք իմ եւ Տեաքք, զի քան զչափն առաւելան առ իս շերմեռանդութիւն ձեր եւ ծառայութիւն, արարիք ինձ դուք զամենայն, զոր ոչ հայր իմ, ոչ մայր իմ եւ ոչ ազգականք իմ կարէին առնել, շնորհակալ եմ Զէնք՝ վասն ամենայն սիրոյ շնորհաց եւ բարեպաշտութեան, որով գգուեալ պատուասիրեցիք զպանդխտութիւն իմ ամիսս ինն. մի յուսահատիք բնաւ, զի բոլոր ջանք ձեր եւ աշխատանք ելին ընդունայն. զի՛նչ իցե այս ապականացու մարմին իմ, տարա՛լք, արկէ՛ք զայն ի հող, բայց հոգի իմ կեայ եւ ոչ մեռանիք...

Բայց վերջին իմ խնդիրս այս է ի ձէնք, սիրելի եղբարք, ահաւասիկ գոյ իմ յայսմ քաղաքի մի դուստր, մի փեսայ եւ մի աշակերտ: Խնդրեմ ի ձէնք, մի՛ թողուք զնոսա անմխիթար եւ անտէր: Խաղաղութիւն ձեզ եւ ողջոյն, եղբարք իմ, եւ շնորհ Տեառն միշտ ընդ ձեզ. ողջ լերուք... Ապա հրամայեաց իւրով բերանով հնչեցուցանել տալ զզանգակունս...



Ալամդարյանի մաեարձանը

Ի 26 հորդոտմ աւուր մայիսի կազմեցան, պատրաստեցան բոլոր եկեղեցականք եւ աշխարհականք ի յուղարկաւորել զմարմինն երանելոյն ի Ս. Խաչ եւ հանգուցանել զնա ընդ հովանեաւ ամենազօրին: Զսուրբ պատարագն սրբագործեաց յայն օր բարձր Արժանապատիւ Թադէոս վարդապետն, յաջորդն Ղրիմու, որ էօծ իսկ իւղով սրբութեան զմարմինն երանելոյն:

Նամակիցս պարզվում է, որ սպանությունը կատարվել է մայիսին, կիրակի գիշերը, բայց թե ամսի ո՞ր թվի գիշերը, չի պարզվում: Վախճանվել է մայիսի 25-ին, ցերեկվա 2—3 ժամին. հանդիսավորությամբ ժողովրդի խումբ բազմութեան ուղեկցությամբ մարմինը տարվել է Լուսավորիչ Մայր-եկեղեցին, որտեղ քահանաները կատարել են լվացումը, զգեստավորումը եւ դագաղի բազմեցումը եկեղեցու մեջտեղը: Հաջորդ օրը, մայիսի 26-ին, պատարագ է մատուցվել. ժամարարը եղել է Ղրիմի հաջորդ Թադէոս վարդապետը, որ հենց այդ օրերին պատահամբ ժամանել էր քաղաք: Նա օծել է մարմինը եւ մի զգալուն դամբանական խոսել: Ժամը 11-ին առավոտյան պատարագից հետո, կատարվել է հուղարկավորությունը դեպի Ս. Խաչ վանքը, որտեղ գերեզմանը փորված է եղել տաճարի գլխավոր հարավային դռան բարձր եւ լայն սանդուղքի աջ կողմում: Դագաղը ուսերի վրա, մինչև քաղաքից դուրս գալը, տարել է հոգևորականությունը, եւ վերջապես, դրել են կառքը եւ հասցրել վանք 7 վերստ քաղաքից. ժողովրդի բազմությունը բոլոր աչք տարածությունը կըտրել-անցել է ոտքով ի պատիվ հանգուցյալի:

Այդտեղ, իր ուսուցչի գերեզմանին ուխտ է եկել Խաչատուր Աբովյանը, երբ 1836 թվի մայիսի 15-ին վերադարձել էր Դորպատից եւ կարդացել իր «Սուգ» ի վերայ դամբարանի բազմերախտ ուսուցչի իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարյանը:

Նրա գերեզմանին այցելության է եկել եւ Ներսես Աշտարակեցին, երբ 1845 թվին վերադառնալիս է եղել Պետերբուրգից: Ասում են, որ Աշտարակեցին դառնալով անմոռն, լռին գերեզմանին, բացականչել է. «Հարութիւն վարդապետ, եթե դու ողջ լինեիր, ես իմ ձեռքով կօծէի քեզ կաթողիկոս»:

1865 թվին նրա երախտագետ աշակերտները կանգնեցրել են գերեզմանի վրա մի ձուլած ու շքեղ մահարձան, որի մեկ երեսին փորագրված է հայերեն, մյուսին ռուսերեն՝ «Յամի 1865 մեծահոգակ ուսուցչի Յարութիւն վարդապետի Ալամդարյանց երախտագետ աշակերտը Ներսիսյան Հայոց Ուսումնարանի Տփլիսայ կանգնեն զայս արձան յանմահ յիշատակ անուան նորա, որ վիրաւորեալ յաւազակաց, վախճանեցաւ ի 25 մայիսի 1834 ամի»:

Թե ինչպես են կատարել նախիջևանցիք նրա կտակը նրա նախիջևանում եղած դատեր, փեսայի եւ աշակերտի վերաբերմամբ, մեզ հայտնի չէ, մեզ հայտնի չէ նույնպես, թե ով է եղել նրա աշակերտը նախիջևանում: Մեզ հայտնի է, որ նախիջևանում ապրող նրա դուստր եղել է Աննան, փեսան— Սերովբե վարժապետ Պատկանյանի որդի տիրացու Պետրոս Պատկանյանը, որը հետո ձեռնադրվել ու կարգվել է Ստավրոպոլի եկեղեցու ծխատեղ քահանա: Բացի Աննայից, Ալամդարյանի ունեցել է նաև երկու դուստր՝ Կատարինե եւ Մարիամ, որոնցից առաջինը ամուսնացել է Ստավրոպոլի Տեր-Մատթեոս քահանա Բեկգյուլյանի հետ, երկրորդը—աստրախանցի Յովակիմ Դիակոնովի (Տիրացույանի) հետ: Սրանց՝ Ալամդարյանի այս աղջիկների անունները հիշվում են եւ նրա «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» ոտանավորի մեջ, որ իր բովանդակությամբ կապված է «Յերկու ձեռին երկու մոմ» սիրուն ոտանավորի հետ:

Հ Ա Յ Ր

Հօր համայն սրբոց, փրկչին Քրիստոսի Յանձն առնեմ զձեզ, դատերք նազելի. Սուրբ աջոյ նորա անտես հովանի ի գլխոց ձերոց մի՛ պակասեցի:

Երթամ ես յաշխարհ ի ձէնջ յոյժ հեռի, Երթամ որոնել զայն, զոր կորուսի. Արտասուօք, ողբովք ձայնիւ սրգալի՝ Խնդրեցից զնա յամենայն երկրի:

Մ Ա Ր Ի Ա Մ

Զի՞նչ խոսիս, հայրիկ, զի՞նչ դու կորուսեր, Եւ զի՞նչ գտանել յանձանօթ երկիր. Կամիս, ասա՛ մեզ, մի՛ թողուցաներ, Տար եւ զմեզ ընդ քեզ, հայր, մի՛

արտասուեր:

Ա Ն Ն Ա

Հայր մեր, ես գիտեմ, ըզմայր մեր ողբայ,
Զմահ նորա յիշեալ, մորմոքի, սըգայ:
Ե՛րբ սա մոռացի զանուն, զկերպ նորա,
Ե՛րբ հանգիստ տեսցուք մեք զհոգի սորա:

Կ Ա Տ Ա Ր Ի Ն Է

Մի՛ արտասուեր, հայր, մի՛ սգար, ողբար,
Արտասուք զքեզ մաշեցին իսպառ.

Զիս ո՞ սիրեսցէ զԿատեայս քո թշուառ,
Թէ զքեզ Տէր տարցէ յիւր երկնից գաւառ:

Ալամդարյանը, բացի իր 32 ոտանավորից, որոնք մտել են մեր արդեն հիշած նրա թոռան՝ Քերովբե Պատկանյանի 1884 թվի հրատարակության մեջ, ունի և ուրիշ գրվածներ, բայց նրա անունը հայտնի է դարձել մեր գրականության մեջ հենց այդ

ոտանավորներով: Նա մինուրը, մեղմ, զգայուն և բանաստեղծական խառնվածքով մարդ լինելով իր դույնպիսի տրամադրությունը, եռանդն ու հոգին հաղորդել է և իր այդ ոտանավորներին: Նա թեև գրել է մեր հին դասական գրաբար լեզվով, բայց նրա գրաբարը կանոնավոր պարզ և անուշ գրաբարն է, հասկանալի ախենքին և բովանդակությամբ աշխարհաբարացած գրաբարը, այսինքն լեզուն հինն է, իսկ բովանդակությունը՝ նորը, աշխարհիկը:

Նրա մեր հիշած «Երկու ձեռին երկու մոմ»-ը, «Յամասուկերջն ապրիլի զպատուհանս բացի» եւ «Յառաւօտ կենաց կուսանիս» մեր մոտ անցյալում մեր ժողովրդի սիրած ու շատ տարածված երգերն են եղել:

ԵՐԱՆՆԻ ՇԱՀԱԶԻԶ

